

**Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 27.04.2023թ. թիվ 02/23/03 որոշում**

«Ամերիաբանկ» ՓԲԸ 2022 թվականի ֆինանսական արդյունքներով ձևավորված զուտ շահույթից տարեկան շահութաբաժիններ չվճարել/չբաշխել:

**Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի 06.03.2023թ. թիվ 01/23/04 որոշում**

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ») մինչև 31.12.2021թ. ներառյալ նախորդ ֆինանսական տարիների ընթացքում կուտակված չբաշխված զուտ շահույթից առավելագույնը 17.700.000.000 /տասնյոթ միլիարդ յոթ հարյուր միլիոն/ ՀՀ դրամը բաշխել որպես շահութաբաժին /այսուհետ՝ «Շահութաբաժիններ»/:

2. Շահութաբաժինների վճարման ամբողջ գործընթացն իրականացնել Բանկի Ֆինանսական տնօրենի հսկողությամբ՝ միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ, այնքանով, որքանով դա չի հանգեցնի Բանկի կողմից ՀՀ բանկային օրենսդրության, Բանկի Շահութաբաժնային քաղաքականության և Բանկի պայմանագրային պարտավորությունների խախտմանը կամ նման վտանգի առաջացմանը:

**28.04.2022թ. կայացած Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի նիստի արդյունքներով**

«Ամերիաբանկ» ՓԲԸ 2021 թվականի ֆինանսական արդյունքներով ձևավորված զուտ շահույթից տարեկան շահութաբաժինների բաշխման/վճարման վերաբերյալ որոշում չի կայացվել:

**Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 29.04.2021թ. թիվ 02/21/03 որոշում**

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ») 2020 թվականի ֆինանսական արդյունքներով ձևավորված զուտ շահույթից տարեկան շահութաբաժիններ /այսուհետ՝ «Տարեկան շահութաբաժիններ»/ չվճարել/չբաշխել:
2. Սույն որոշման 1-ին մասն ուժի մեջ է մտնում 2021թ. դեկտեմբերի 31-ին պայմանով, եթե մինչև այդ Բանկի բաժնետերերի ժողովի կողմից չի կայացվել Տարեկան շահութաբաժիններ բաշխելու/վճարելու վերաբերյալ որոշում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

**Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 27.05.2020թ. թիվ 01/20/03<sup>1</sup> որոշում**

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ») 2019 թվականի ֆինանսական արդյունքներով ձևավորված զուտ շահույթից տարեկան շահութաբաժիններ /այսուհետ՝ «Տարեկան շահութաբաժիններ»/ չվճարել/չբաշխել:
2. Սույն որոշման 1-ին մասն ուժի մեջ է մտնում 2020թ. դեկտեմբերի 31-ին պայմանով, եթե մինչև այդ Բանկի բաժնետերերի ժողովի կողմից չի կայացվել Տարեկան շահութաբաժիններ բաշխելու/վճարելու վերաբերյալ որոշում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:



<sup>1</sup> Կարևոր նշում: 2019 թվականի ֆինանսական արդյունքներով ձևավորված զուտ շահույթը Բանկի Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի կողմից 27.05.2020թ. կայացված թիվ 01/20/03 որոշմամբ նշված պայմանների վրա չհասնելու հիմքով չի վճարվել/չի բաշխվել:

Տարեկան շահութաբաժին վճարելու դեպքում ամբողջ գործընթացի կատարումն ապահովել Բանկի Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրենի հսկողությամբ՝ միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ, պայմանով, որ դա չի հանգեցնի Բանկի կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտմանը:

Տարեկան շահութաբաժին վճարելու դեպքում՝ վճարել Բանկի այն մասնակիցներին, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ՝ ըստ կանոնադրական կապիտալում մասնակցության համամասնության:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

---

<sup>4</sup> 2017 թվականի համար մեկ բաժնետոմսի մասով շահութաբաժին մեծությունը կազմում է 9,849 /ինը հազար ութ հարյուր քառասունինը/ ՀՀ դրամ, իսկ 2016 թվականի համար՝ 21,703 /քսանմեկ հազար յոթ հարյուր երեք/ ՀՀ դրամ: 2016 թվականի համար մեկ բաժնետոմսի մասով շահութաբաժնի մեծությունը կազմում է 21,703 /քսանմեկ հազար յոթ հարյուր երեք/ ՀՀ դրամ, իսկ 2015 թվականի համար՝ 16,807 /տասնվեց հազար ութ հարյուր յոթ/ ՀՀ դրամ: